տարկ թողեալ է զտեղին 'ի գլուխ պատշաճագոյն բառի. ապա գրեալ է ստոր գրչաւ՝ Հրմ. անծանօթ է մեզ ձայնս, եթէ չիցէ սրբ. ընթեռնլի. իսկ այլ օրինակք պէսպէս գրեն. երեքն Իրմ, երկուքն Իրմ, մին Քրմ։ Արդ յայտ է զի ամենեցուն ևս սոցա առաջին օրինակ առեալ է 'ի մերոյն. այլ ոչ ուրուք հասեալ միտաց Հրմ բառի, վասն որոյ և ըստ կամս յեղյեղեալ։

Ոչ ումեք կարծեմ յետ այսպիսեաց ապացուցական բանից ունել տեղի երկբայելոյ ընդ հարազատութիւն մատենիս, լինել իսկագիր և նախագաղափար օրինակ գործոյն և հեղինակին, այլ բաղձալ տպագրութեան մատենին, զոր իցէ թէ առատաձեռնէր ոգի հայասէր՝ թէ ոչ զբոլոր՝ գէթ մասամբ՝ նմանագիր բնագրին կամ պատկերօրէն նմանատիպ հանել և ընծայել 'ի վայելս և 'ի սխրագործութիւն բանասիրաց և հայրենասիրաց որդւոց Թորգոմայ, և սրտից երախտապարտից՝ առ այսպիսիս իւրեանց նախնիս, քաջիմաստս և անմահական անուան արժանաւորս։

Հ. Ղ. Մ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԱՑ ԵՒ ԳՈՒՐԳԵՆԻ

ՈՐՔ յաւազին թաւալագլոր բռունք մարտնչիք ընդդիմակք
Ակայք ընդ իս 'ի յասպարէզ ամբիծ սիրոյն մրցողաց.
Ընչին դափնի միոյն 'ի ձէնջ է լոկ յաճախ մրցանակ.
Ամենեցուն աստ անխտրիր անմահութիւն պարգևի. —
Իզհարազատ քրիստոսակրօն երկուց եղբարց առից երգ. —
Դաւիթ, Գուրգէն սիրաբողբոջք և հարազատք երկոքին,
Համբակ 'ի տիս նուէր Յիսուսի զանձինս ածել տենչային,
Ուխտ 'ի սրտի մինչէն հաստատ վասն Յիսուսի մահանալ։
Լուա՛ն մաղթանք ձեր, ողջակէզք 'ի սեղանի սուրբ սիրոյն.
Ահա հասջիք վաղվաղակի փափագմանցդ 'ի կատար,
Ահա հրաման խիստ ելանէ քրիստոնէից հալածող,
Ահա գան անգութ դահիճք կապել ըղձեռս երկոցունց։
Ճակատք պայծառ շողան շնորհօք իբր ոսկեքղանց ամպ գարնան,
Անմեղութիւն զիւրն ըսպիտակ տարածանէ քօղ 'ի դէմս.
Դընան խոնարհք դատաւորին իւրեանց հանդէպ յանդիման.
Այսպէս անմեղ տատրակք երկու վառք ըղմիմեամբ սրտակաթ,
Ի նոյն ոստոյ թըռիչս առեալ հեզիկ մինչէն ընդ ուղին։ —
Անագորոյն դատաւորին սիրտըն շարժի 'ի գորով,
Հայի ընդ դէմս պատանեկացն և արձակել տայ զկապանս.
— "Մտիք առ իս, ո՛վ որդեակք իմ" գողտըր բանիւ բարբառի,
"Որ անգութ մըղէ զձեզ յայս զոհել զանձինս յարբունս ամաց.
Օ խո՛րդ քաղցր համարիցիք ըղմահուն դառըն տանջանս"։
— Երկնէն նոքա համաբարբառ. "Մեք ըզՅիսուս կամիմք մեք"։
— Այս գըթութիւն ո՞չ բարբառի, բարէ՛, 'ի սիրտ ձեր տակաւ,
Այս ուստի այս ատելութիւն մուծեալ յոգիս ձեր մանկունս.
Հիմ զաշխարհիս զայս ըղհաճոյս արհամարհել յանդգնիք.

Այլ եթէ ձեր չէք գութ յանձինս, սիրտ իմ խօսի վասըն ձեր ։
Գեղեցկազուարճ է առաւօտ գարնանային քաղցրաւէտ
Պատանեկին հասակ անմեղ, յորդէն հաճոյք լիուլի,
Զի վայելեալ 'ի բերս բնութեան, էր ըշտապէք, աւա՜ղ, դուք
Զոսս 'ի դամբան անըրջական, ուստի դառնալ չէք երբէք .
Վայելեցէք, ձեզ ահա ձօն տամ ես կուսանս գեղանի .
Տեսէք քանի հարուստ և գանձք գոն թէ կամիք բազմահոծ .
Ըզգեստք և զարդք ոսկեճամուկ, մանեակք, կամարք ոսկեղէն,
Ձեր այս լոյսն նըժոյգք սեաւ ծնունդք Արաբիոյ աւազոյ,
Զէնք և ասպար ոսկեկուռ 'ի զարդ մարմնոյ, ւ՚ արծաթ 'ի գլուխ .
Ձեր է համայն . միայն թողէք զպատիր հաւատս Յիսուսի ”.
Ասաց և ձեռս արկեալ զնոցա պարանոցաւըն կամէր
Համբոյրս դրոշմել 'ի սըրբանուէր ճակատ նոցուն մաքրական ։
“ Զ Յիսուս կամիմք ”. կրկնեալ անդէն թափեն ըզձեռն 'ի յանձնէ .
“ Քեզ լոյսն աղջկունքդ և զարդք, մանեակք, կամարք և բեհեզ .
Եւ ոսկեկուռ զէնք և ասպար, մեզ են վահան սուրբ հաւատք .
Զ Յիսուս կամիմք ” ։ — Ո՛վ քաղցըր բան և առաւել ներդաշնակ
Քան ըզխոխոջ մանուածաւալ սուրբ վըտակաց հեզասահ .
Եւ քան զփիւռ անուշահոտ ծաղկանց 'ի մէջ հառաչող .
Բան անոյշ, քաղցրահընչիւն միանգամայն և հըզօր .
Զոր խնդութեամբ լսեն հրեշտակք առ գահոյիւքն աստուածեան,
Եւ զոր լուեալ ահեղ աթոռք բռնաւորաց սասանին .
Ո՛վ բան վեհ, զոր ջերմեռանդըն ազգեն հաւատք 'ի բերան,
Որ զմահացու ծնունդ հողեղէն երկնից փեսայ անուանէ ։ —
Անօրէնն ընդ այն ցասմու, գոչէ ձայնիւ ահեղասաստ,
“ Ապերա՛խտք, զո՞ւր ուրեմն ես բարբառեցայ ձեզ բարիս .
Եւ արդ զի զիս և զիմ նըւէրս արհամարհ դուք կացուցէք,
Եւ նըշաւակ հանուրց ըզձեզ անդէն և անդ արարից .
Ըստ ձեզ դահիճք . առէք մահու սպանէք զնոսա յասպարէզն ” ։
Ո՞ւր, ժողովուրդք, արագաքայլ պնդեալ ոտիւք ո՞ւր դիմէք,
Զի՞նչ տեսարան նորահրաշ այսօր աչացդ ընծայիցի .
Ծա՜մր արեան . . . անգո՜ւթ տեսիլ . . . անագորո՜յն երևոյթ, . . .
Ա՛յ անգութք, գնայք տեսանել զհեղումն արեան եղբարց ձեր,
Ո՛վ բնութիւն, այդչափ վայրագ զոգի մարդկան հաստեցեր ։
Որպէս ալիք 'ի ծով ծըփան յասպարիզին ժողովուրդք,
Ձայն ամբոխին խառնիճաղանճ մինչև յերկինս ամբառնայ .
Լըցան օդք յաղաղակէն, խոնջին անձաւք յարձագանգաց,
Որպէս ոչխար անմեղ և հեզ 'ի սպանդ վարեալ խուժադուժ
Գան հարազատքն հանգունատիպ սուրբ հրեշտակաց երեսօք,
Ըզպատանի հասակ տեսեալ ժողովրդեան ըզնոյն
Շարժին 'ի գութ, “ Թողէք ազատ ”, առ դահճապետըն գոչեն .
Դարձուցանեն զաչս 'ի տեսոյն, այլք հայհոյեն ըզդատողն .
Իսկ զոյգ ամոլքն այն անարատ սուրբ ողջակէզքըն սիրոյ,
Ծունր 'ի գետին փափկասընունդ, ձեռս ամբառնան առ Աստուած,
Հեզամռունչ մատուցանեն աղերսալիր պաղատանս ։
“ Յիսուս ընկալ զանձանցըս զոհ, քեզ նըւիրեմք զաւուրս մեր,
Տուր մեզ 'ի սէր քո վայելել, որում ցանկամքըս միայն ” ։
Յայնժամ ելեալ կըրսերոյն ծունր 'ի խոնարհ կայ 'նդդէմ դահճին .

Մոսկայ դահիճն 'ի յամբառնալ ընդ գլուխ նորա ըղձուսէր .
Աչերն 'ի վեր տարեալ զաստուածն երկնից ձեռքըն կասին ,
Եւ հուսկ յետոյ յանմեղին փող մահու հարուածն իջանէ . . . —
Այսպէս Գուրիթ ըղցայտ արեան հարազատին զիւր զեղլոր ,
Թաւալագլոր ետես զմարմինն 'ի վարդագոյն ճապաղիս ,
Եւ հառաչեաց նուաղաձայն . “ Ահկից Գուրգէն ըղհետ քո „ . . . —
Եւ զպարանոցն անդէն կարկառ դահճապետին առաջի . . .
Հոգիքն արդար եղին հանդէպ անմահական փեսային ,
Եհա պըճնխին գըլուխք նոցա բրաբիոնիւ մրցական .
Եղէ լուիցուք ըղհրճուական երգս հարսանեաց զըւարթնոց : —

ՍՐԱՊԻՈՆ ՀԷՔԻՄԵԱՆ

Նիւթ փոքրիկ այսր քերթուածոյ քաղեալ է 'ի Յովհաննու կաթողիկոսի Պատմութենէն , որ այսպիսի ինչ պատմէ զերկուց եղբարցս :

“ Այն . . . եղբարք երկուք 'ի նախնեացն Գնունիք , որոց անուանք միումն Գուրիթ և միւսումն Գուրգէն ճանաչիւր , որք և ըմբռնեալ 'ի գերչաց ածան առաջի բռնաւորի ոստիկանին . և իբրև հարց և փորձ ընդ նոսա լեալ և գրեթէ զկէս թագաւորութեան իւրոյ տալ նոցա խոստանայր . . . . հուպ ընդ հուպ 'ի համբոյր մերձեցուցեալ զնոսա այնպէս շոգմոգէր շողոմութեամբ բնաւ հնազանդել նորայն բանի և խնայել յարբունս մանկութեան իւրեանց , և դառնալ յօրէնս զոր ինքն պաշտէր : Իսկ նոցա գեղեցիկ իմն մտութեամբ 'ի զէն զինուորութեան Քրիստոսի զինքեանս վառեալ համարձակաձայն բարբառով զբարւոք դաւանութիւնն քարոզէին առաջի ամենեցուն , թէ Քրիստոնեայք եմք : . . . Իբրև զխորհուրդ նոցա այսպէս 'ի սէր նահատակագրին Քրիստոսի արձանացեալ տեսանէր թշնամին , հրամայէր այնուհետև սրով սպանանել զնոսա „ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ Է ·

Ընչից վրայ :

ԱՆՑԱԾ անգամ ճարտարութեանց գլխաւոր գործիքներէն առջինին վրայ խօսեցանք , որ էր Ընչխատանք . աս անգամ ալ երկրորդին վրայ խօսինք , որ է Ինչք : — Ինչք բառը պիտի գործածենք ինչուան հիմա սովորական եղած դրամագլուխ բառին տեղը , որպէս զի կարենանք Եւրոպացւոց capital (քափիթալ) բառին ճիշդ նշանակութիւնը տալ , և որպէս զի իմաստի շփոթութիւն չըլլէ՝ դրամագլուխ բառը անխտիր ընչից տեղ գործածելով :

Տնտեսական գիտութեան մէջ երբոր ինչք կ'ըսենք , կը հասկընանք ո՛ր և իցէ ստացուածք որ բերք մը հանելու կը գործածուի . ինչպէս գործատուններ , մեքենաներ , գործիքներ , կենդանիներ և այլն , ամէնն ալ ինչք են . ուստի հարկ չէ որ գործաւոր մը առատ դրամ միայն ունենայ ճարտարութեան մը ձեռք զարնելու համար . երբոր նոյն ճարտարութեան հարկաւոր եղած կահ կարասին ունի , շատ անգամ քիչ մը դրամը բաւական կ'ըլլայ զանիկայ գլուխ հանելու , և ահա ընչից աս դրամական մասն է միայն որ դրամագլուխ կը կոչուի : Բանը աս է որ եթէ մէկուն բոլոր ինչքը դրամ ըլլայ , նոյն դրամով կրնայ ուզած